ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
«Շինարարական թույլտվություններ ձեռք բերելու համար էլեկտրոնային ընթացակարգի և մեկ պատուհանի» TF012782 դրամաշնորհային ծրագիր
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ No. TF No. 012782

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ Հայաստանի Հանրապետությունում Շինարարական Թույլտվությունների Էլեկտրոնային Միասնական Համակարգի Մշակում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ EPCP- C-1.1

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամից (ԻԶՀ) ստացել է դրամաշնորհ «Շինարարական թույլտվություններ ձեռք բերելու համար էլեկտրոնային ընթացակարգի և մեկ պատուհանի» TF012782 դրամաշնորհային ծրագիր և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Խորհրդատվության տրամադրման նպատակն է մշակել այնպիսի էլեկտրոնային կառավարման համակարգ, որը կգործի երեք հիմնական ուղղություններով՝

- Հայտերի էլեկտրոնային եղանակով ընդունման և մշակման միասնական համակարգի մշակում,
- Հայտերի էլեկտրոնային եղանակով ընդունման համակարգի ինտեգրում տեղական ինքնակառավարման մարմինների համակարգերի հետ,

Հայտերի էլեկտրոնային եղանակով ընդունման համակարգի ինտեգրում մատակարարող (էլեկտրականություն, ջուր եւ այլ կոմունալ ծառայություններ) կազմակերպությունների համակարգերին կամ նրանց, ինչպես նաև համապատասխան իրավասություն ունեցող պետական մարմինների մասնակցության ապահովումը համակարգում:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածն է մոտավորապես 12 ամիս է:

ՀՀ կառավարության աշխատակազմն եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ համապատասխան որակավորում ունեցող Խորհրդատվական ընկերություններին (այսուհետ՝ Խորհրդատուներ) հրավիրում են ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների

մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Առաջադրանքի ոլորտում խորհրդատվական ընկերության ընդհանուր փորձը (տարի),
- Համապետական առնվազն մեկ էլեկտրոնային կառավարման համակարգի մշակման/ներդրման փորձ,
- Ծրագրային ապահովման լայնամասշտաբ համակարգերի մշակման առնվազն 3 տարվա փորձ,
- Աշխատանքային փորձ միջազգային կազմակերպությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում,
- Խորհրդատվական փորձը ԵԿԱ տարածաշրջանում:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի հունվարի 11-ի «Ուղեցույցի՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի համաձայն 2011թ-ի հունվարին հրատարակված (Համաշխարհային Բանկի «Ուղեցույց՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԳ վարկերի եւ դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում») ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին II-ում ներկայացված «Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրության» ընթացակարգերի համաձայն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչեւ 2014 թ.-ի փետրվարի 19-ը, ժամը 18:00:

ՀՀ ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Կառավարության տուն 1,
Հանրապետության հրապարակ,
Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 545 708
Էլ-փոստ՝ info@ffpmc.am